Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտն անուշիկ

Կ Ա Ղ Ն Ո Ւ Ծ Ա Կ
կանաչ կարմիր պսակին
Թող միանանք միասին,
Եւ յոյսներս յախտեան
Մեզից լինին անբաժան:

ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵ

Լինում է չի լինում
մի այծ: Այս այծը անտա-
ռումը մի տնակ է շինում
և իր փոքրիկ ուլերի հետ

բնակում նրանում: Ամեն
առաւօտ այծը դուրս էր
գնում արածելու, և գր-
նալուց առաջ ասում էր
ուղիկներին.

—Որդիք, դուռը պինդ
փակեցէք, հանգիստ կա-
ցէք, և դրսից ով որ գա-
լու լինի, դուռը բաց չա-
նէք: Իսկ դաշտից վերա-
դառնախս պողերով բա-
խում էր տնակի դուռը և
ասում:

Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալպլատուրիկ այծիկներ,
Ելէք դուռը բաց արէք,
Բերաններդ թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
կաթ եմ բերել իւղալի:

Ուլերը բաց են անում
դուռը, մայրը ծիծ է տա-
խս նրանց, կրկին գնում
արածելու:

Այս ամենը տեսնում ու
լսում է գայլը: Նա մըտ-
քումը գնում է, որ ուլե-
րին խարելով՝ ներս մտնի
նրանց տնակը: Մի օր երբ
մայրը դուրսն է լինում,
գայլը գալիս է կամաց-
կամաց, թաթով գարկում
է դուանը և ասում:

Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալպլատուրիկ այծիկներ,

Կ Ո Ր Ա Ծ Հ Ո Ր Թ Ը

Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր պտրում դաշտի միջին:

Ելէք դուռը բաց արէք,
Բերաններդ թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
կաթ եմ բերել իւղալի:

Ուլերը մի լաւ ականջ
են գնում և հասկանում
են, որ դուռը բախողը ի-
րանց մայրը չէ, և պա-
տասխանում են. — Դու մեր
մայրը չես. մեր մօր ձայնը
քաղցը է ու բարակ, իսկ
քո ձայնը հաստ է ու խըռ-
պոտ. մեր մայրը դուռը
պողերովն է բախում, իսկ
դու չանգրատում ես ճան-
կերովդ: Մի քիչ սպասիր,
ահա մեր մայրը կըգայ,
քաջ Բօղարն էլ հետը:

Բօղար շան անունը որ
լսում է գայլը, իսկոյն հե-
ռանում է սուս ու փուս:

Ուլերի մայրը գալիս է,
գովում է ուլիկներին և
ասում. «Դուք լաւ էք ա-
րել, որդիք, որ դուռը բաց
չէք արել, եթէ ոչ նա ձեզ
ամենքիդ էլ կուտէր»:

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծըծեր կաթով լիքը.
«Հորթուկս նւր է», նա բառանչեց,
Խեղմ պառաւին լացացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսեց մի բարակ ձայն.
Կովս իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,
Իսկ պառաւը տընքտընքալով,
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծըծերը բերանն առաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԻ

1

Անտառի խորքում մի
ճօճ կար կապած և նրա
մէջ մի մանուկ դրած:
Լաց էր լինում մանուկը:
Մայր չըկար մօտը, որ

ծիծ տար, հայր չըկար,
որ պահպանէր: Անտառու-
մը մարդ չըկար:

Մի զիժոտ պախրակով՝
կաթնալից կրծքով եկաւ
ճօճի մօտ իր հորթուկի
հետ և տխուր ձայնով ե-
րեխին ասեց.

Սիրուն երեխայ,
Որբ ես մնացել,
Քո անբախտ մօրը
գերի են տարել.
Նա զնաց, կորաւ,
Էլ յետ չի գալու,
Էլ ոչ մի անգամ
քեզ ծիծ տալու:
Նա քեզ փաթաթեց
լայն տերևներով,
Ճօճի մէջ կապեց,
«նանիկ» ասելով.
Նա լաց էր լինում
աղի արցունքով,
Իր վերջին նանիկն
ասում էր լալով.
«Մեծատերև
թաթաշոր,
«Մանրատերև
ոտաշոր,
«Քամին կանի
ժաժ կըտայ,
«Պախրէն կըդայ
ծիծ կըտայ»...
Ահա եկել եմ,
որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ պահպանեմ
իմ հորթուկիս պէս:

2

Պախրան ծիծ տըւաւ ե-
րեխին, երեխան կշտա-
ցաւ ու քնեց: Պախրան
իր հորթին թողեց երեխի
մօտ, իսկ ինքը զնաց մօ-

տերքում արածելու, որ
կաթը շատացնի, և գայ
երկուսին էլ ծիծ տայ:
Հորթը մնաց երեխի մօտ,
օրօրեց նրան և նանիկ
ասեց.—

Նանիկ արա,
նանիկ, նանիկ.
Նանիկ արա,
սիրուն մանկիկ.

Ահա կըդայ իմ մայրիկը,
կուրծք ու ծըծեր
կաթով լիքը.

Ամեն գետնի
նա չի նստում,
Ամեն խոտից

չի արածում,
նա չի խմում
ամեն ջրից,

Աղ չի լիզում
ամեն քարից.

Նա սարէսար
ման է գալիս,
Որբ է գտնում,
ծիծ է տալիս.

Որտեղ որ է,
ահա կըդայ,
ինձ էր քեզ էլ
կուշտ ծիծ կըտայ.

Նանիկ արա,
նանիկ, նանիկ,
Նանիկ արա,
սիրուն բալիկ...

Պախրան կուրծքը լիքը
յետ դարձաւ արօտատե-
ղից և ծիծ տըւաւ երե-
խին էլ, հորթին էլ:

Ով որ տարով կըմեծա-
նայ, մեր երեխան օրով
մեծացաւ: Շատ շանցաւ,
նա դուրս եկաւ ճօճիցը,
մէկ օր չորեքթաթ տւաւ,
միւս օրը ոտքի կանգնեց.
մի քանի անգամ սահեց,
վայր ընկաւ, բայց շուտով
ամրացաւ և սկսեց պախրի
հետևից վազւըզել:

3

Մի թագաւոր որդի չու-
նէր. երազումն ասեցին.
«Թագաւոր, Աստած քեզ
մի որդի պիտի տայ ան-
տառի խորքումը»:

Մէկ անգամ այս անգա-
ւակ թագաւորը որսի գը-
նաց իր որսորդների հետ:
Շատ ման եկան, ոչինչ
չըգտան, բայց որ հասան
անտառի խորքը, այնտեղ
մի պախրի հետք գտան և
ըա մօտ մե երեխի ոտ-
տաեղեր:

Ամենքը մնացին զար-
մացած և չէին հաւատում
որ երեխի կըլինի ոտնա-
տեղերը. բայց թագաւորն
խկոյն յիշեց իր երազը և
հրամայեց որսորդներին,
որ երեխի հետքը քշեն և
ուր որ լինի գտնեն նը-
րան:

Որսորդները գնացին և
երկու ժամ՝ շանցած, մի
սիրուն տղայ բերին թա-
գաւորի մօտ և պատմե-
ցին, թէ ինչպէս գտան
նրան պախրի ծիծը ծը-
ծելիս:

Թագաւորը շատ ուրա-
խացաւ, երեխին գրկեց,
համբուրեց և անունը դը-
րաւ Պախրատուր: Պախ-
րատուրը մեծացաւ թա-
գաւորի պալատումը, լաւ
ուսում առաւ, վերջը դա-
ռաւ թագաւոր և մեծ զօր-
քով զնաց իր մօրն ազա-
տեց գերութիւնից:

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏԻԱԾ է

Փայլուն արկը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ շուտով գնաց թաք կացաւ,
Գիշերւայ մութը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:
Ամեն մարդ քաշւեց իր տունը մտաւ,
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ,

Միայն խեղճ որբը, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:

Բարի տան-տէրը, վերևից նայեց,
Թշւառ որբիկին ներս հրաւիրեց,
Եւ այնուհետև տարաբախտ տղան
Ունէր իր համար տէր ու տիրական:



ԳԻՒՆԱԶ ՏԱՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մէկ անգամ Գիւնազ
տատին շրջապատեցին իր
թոռները և ստիպեցին, որ
տատը թռչնիկներ շինէ
նրանց:

Տատն էլ վեր առաւ
փոքրիկներից մէկին, զը-
րաւ ծնկան վրայ, երկու
ձեռքերից բռնեց, և վեր
ու վայր թափ տալով եր-
գեց.

Ղու—ղու—ղու—
ա ղու—ղու—ղու.

Նակ, նակ, ա—զու—
նակ, թը՛ռոռ...

Յետոյ մի ուրիշն ըն-
կաւ տատիկի գիրկը և
ասեց.

Տատիկ ջան, տատիկ,
ինձ էլ մի կաչաղակ շի-
նես...

Տատիկը նրան էլ դրաւ
ծնկներին և առաջւան պէս
երգեց.

Չա—չա—չա, կա—չա, չա
նակ, զակ, կա—չա—
—զակ, թը՛ռոռ...

Տատիկ ջան, տատիկ,
ինձ էլ մի ծիտիկ շինես,
ասեց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր ու
վայր թռցնելով, երգեց. Փ
ծիտ եմ, ծիտ եմ,

ծըլւըլում եմ,

ծիւ, ծիւ, ծիւ.

Ոստոսում եմ,

թռչկոտում եմ,

Տիւ, տիւ, տիւ.

Սրի, թնիկը

արի, վեարիկ,

Որ ես զառնամ.

փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ,

պիծիկ—միծիկ,

թը՛ռոռ...

ՄԱՆԿԱՆ ԽԱՂ

Պ Ա Ռ Ա Ի Ը

Ղու—ղու, ղու—ղու,
իմ վառիկներ,

Սիրուն ճուտեր,

հաւ մարիկներ,

Ոսկեփետուրաքլարիկներ,

եկէք կերէք

ձեր հատիկներ:

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Զար փիսիկը մօտ է գալիս,

Սև ձագին է մտիկ տալիս.

Թաթը մեկնեց,

վզից բռնեց.

Աքաղաղներ,

հաւ մարիկներ,

Պահպանեցէք
ձեր ճուտիկներ: Իբոյ
մայզա սքսշներ

Հասէք, հասէք, օգնեցէք,
Զար փիսիկին պատժեցէք:

Հ Ա Ի Ե Ր

Ժողովւնք, միանանք,

Զար փիսիկին վրայ տանք:

Բ Ո Լ Ո Ր Ը

Տեսաք, տեսաք

ինչ եղաւ,

Գող կատուն որ


մեզ տեսաւ,

Խիստ վախեցաւ

ու վախաւ.

Ուրեմն ապրենք միամին,

Որ մօտ չըգայ թշնամին:



Ինչու աքլարը կանգ-

նած է բակում, պինդ-

պինդ կանչում է իր կու-

կուրիկուն. — Ենդուր որ

վազուց արևն է ծագել,

բայց ծոյլ երեխան քնից

չի զարթել: Դեռ չի վեր

կացել, աղօթքն արել, դըպ-
րոցի դասը դեռ չի սովո-
րել: Կանչում է աքլարն
իր կուկուրիկուն, տղայոց
պարտքը միտներն է ձը-
գում:

ՀԱՐՄԻ ՀԱՇԻՒԲ

Երկուշաբթի հաց կը-
թըմեմ, երեքշաբթի լոշ
կըթըմեմ, չորեքշաբթի
լրւացք կանեմ, հինգշաբ-
թի կար կըկարեմ, ուրբաթ
օրը պաս կըկենամ, շաբաթ
օրը ժամ կըգնամ, լոյս
կիրակի փոանց ~ փոանց
(հազիւհագ) կըզարդար-
փմ, կերթամ հօրանց:

ԶՈՐՄ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է
ճնծաղիկ,
Ապրիլը կապոյտ
մանուշակ,
Մայիսին բացւում է
վարդը,
Սոխակը երգում անուշակ:
Յունիսը մեղ խոտ է
տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձուխնձոր,
Եւ ուրիշ շատ
հասուն մրգեր.
Սեպտեմբերը մեղ տալիս է
խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինի,
Նյեմբերը բոխին ու տակը:

Դեկտեմբերին մասնաւ-
ծին է գալիս,
Յունւարին ծածկում սա-
սար ու ձոր,
Փետրւարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու
տաք օր:

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալում է
չորս շրջանում,
Այս պատճառով
չորս ժամանակ՝
Չորս եղանակ է
մեղ բերում:

ՏԱՐԻԱՅ ԱՄԻՍՆԵՐԸ

Յունւար, փետրւար,
մարտ, ապրիլ, մայիս, յու-
նիս, յուլիս, օգոստոս,
սեպտեմբեր, հոկտեմբեր,
նոյեմբեր, դեկտեմբեր:

ԳԴԱԼ-ՓՈԽ

Ամառն էր: Հունձն ըն-
կել էր: Մէկ յօնեցի ու
մէկ աշտարակցի միասին
հունձ էին անում: Ճաշի
ժամանակ նրանց համար
մածուն բերին մի մեծ
մաթրաթով. բայց երկու
գդալի տեղ մէկն էին բե-
րել:
Երբ որ մածնի բըթու-
ճը պատրաստեցին, աշ-
տարակցին ասեց.

Նու գդալ մէկս հպտէէ.
արի գդալ-փոխ անենք,
գդալ-փոխ ուտենք:
Լուեցին ըրհամաձայ-
նեց, ասեց:
— Թող ես գդալով ու-
տեմ, դու ձեռով կեր:

— Ոչ պատասխանեց
աշտարակցին: Օրովհետեւ
գդալ-փոխ չես ուզում,
արի մէկ բան ասեմ, այն-
պէս անենք: Ով որ մեզա-
նից եօթը գիւղի անուն
տայ վրայ-վրայ, շուտ-
շուտ, գդալով նա ուտի:

— Լաւ. առաջ ես կա-
սեմ. ասեց յօնեցին ու
սկսեց:

— Հլէ, — Լօ...ոի. հլէ,
Ու...զնուն...լար...

Լուեցին միայն երկու
գիւղի անուն տրւաւ, այն
էլ չըկարողացաւ շուտ-
շուտ ասել ու սուս կա-
ցաւ. յետոյ աշտարակցին
սկսեց և կարկուտի պէս
վրայ տրւաւ.

Ուշի—Ուշական
Փարպի—Բիւրական
Թալին—Թալիշ—

Մաստարա
Գդալի պոչը գէսն արա:
Ասեց ու գդալն առաւ
յօնեցու ձեռքիցը: Լուե-
ցու բերանը մնաց բաց.
բայց էլ ինչ կարող էր ա-
նել. խաղը տանուլ էր
տըւել:

ԱՐՀԵՍՏ ԸՆՏՐՈՂ ՄԱՆՈՒԿՎԸ

Թորոսի որդին մի ծոյլ
տղայ էր, ոչ գիր էր սով-
րում և ոչ մի արհեստ:
— Ի՞նչ արհեստ սով-
րեմ. — կիրաթիրնթում էր
նա. կեկչութիւնը շատ
լաւ արհեստ է, բայց բո-
բիկ ստքով ամանում
կանգնել, արագ պտրտել,
դա այնքան հեշտ չէ: Ա-
ւելի հեշտ է փուքսի փչե-
լը, բայց այդ իմ ձեռքում
երկար չեն թողնիլ: Վար-
պետ էլ դառնամ, ինչ եմ
անելու. պէտք է մատնե-
րով փոքր ինչ բամբակով
տաք-տաք պղղնձին նաշա-
դիր քսեմ, ձեռքերս այրեմ:

Զէ, այդ իմ բան չէ:

— Դարբնի մօտ կեր-
թամ, այնտեղ էլ փուքս
կայ, ձմեռն էլ տաք է,
բայց մեծ ուժ է պէտք
այդ գործի համար. ահա-
գին մուրճով երկաթը
ծեծել, որ նա տափակի,
ես այդ չեմ անիլ ինչ
կուզի լինի:

— Նալբանդը լաւ է: Մե-
խի ծայրը սրել և պայտեր
շոկել, այդ շատ գժւար
չէ, բայց մէկ ամենի ձիու
ոտք բունել, ճնկանը դնել
— երկիւղալի է. ձիու աքա-
ցին իմ ընկերներիս ապտա-
կից թունդ է: Զէ, իմ

կարծիքով դաւ լաւ ար-
հեստ չէ:
— Դերձակութիւնը մա-
քուր արհեստ է, լաւ միտս
ընկաւ: Բայց ինչ եմ ա-
սում. ամբողջ օրերով
ծալպատիկ նստել գուլխ
քաշ զցած կարել ու կա-
րել ոչ խաղալ կը լի և ոչ
վազւզել: Չէ, դա էլ բան
չէ:
— Ինչու չըգնամ որ-
մնագիր պառնամ, բարձր
պատերի ծայրերին կանգ-
նեմ, այստեղից կանչեմ.
— «Քար ու կիր տըւէք,
աղիւս ձգեցէք»: Այսպէս
կը գուսամ և կը հրամայեմ,
որ աշխարհք տեսնի, թէ
ես վարպետ եմ, գործս
լաւ գիտեմ: Բայց վայ թէ
յանկարծ այդ բարձր տե-
ղից ոտքս ոլինի և թըրմ-
փալովներք կլորւիմ: Չէ,
այդ հեշտ գործ չէ և ոչ
իմ բանն է:
Երկի չըկայ այնպիսի
արհեստ, որ ես հաւանեմ,
զնամ սովորեմ: Թէ հիւն
դառնամ, ոտքս կը կարեմ.
Կօշկակար դառնամ, ձեռ-
քըս կը ծակեմ. ոսկերիչ
դառնամ, մատներս կայ-
րեմ. թէ բրուտ դառնամ,
ցեխ պիտի կոխ տամ.
վարժարան զնամ, գիր

պիտի սովորեմ: Չէ, իմ
կարծիքով ամենից լաւ է՝
ոչնչ չը շինեմ, ոչնչ չը-
սովորեմ: Բայց այնուհե-
տև ես ի՞նչ կը դառնամ:

ԾՈՅԼ ԱՂՋԻԿ

Բանն ի՞նչ կանեմ,
կեղտոտ է,
Բամբակը կորիզոտ է.
Մետաքս պիտի որ մանեմ,
Մաստակ պիտի որ ծամեմ,
Կտերը տիտիկ*) անեմ,
Անցնողին մտիկ անեմ,
Ուտեմ, խմեմ,
Մթնի, քնեմ:

Ա. Ռ. Ս Ն Ե Ր

Իմացողին մին, չիմա-
ցողին հազար ու մին:—
Իմացողին մէկ ասա, չի-
մացողին հա կաց, հա ա-
սա:— Մկին սապոնն ի՞նչ
անի, խնին խրատն ի՞նչ
անի:— Ով որ երգի ամա-
ռը, նա պար կը գայ ձը-
մեռը: Մի բաժակ ջուր,
ով ուզի՝ տուր:— Էսօրւայ
փուշը, էգուցւայ նուշը:—
Հացն ուտելով, բանն ա-
նելով:— Ապրել կայ եր-
կաթ է, ապրել կայ ար-
ծաթ է:— Ձըւի գողը ձիու

*) Կտերը տիտիկ անել = տանիքին = կտրին նստել:

գող կը դառնայ:— Տաշած
քարը գետնին չի մնալ:—
Ծերանաս, ծերի պատիւն
իմանաս:— Կուշտը քաղ-
ցածին մանր կը բրթի:

ՊԱՌԱՀԻՆ ՈՒ ԱՅԾԸ

Կար չըկար երբեմըն
Մի աղքատ պառւիկ.
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ.

Չալիկ, մալիկ,
Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատարը
Նըրա հետ կիսեց.

Միրով, յօժար
Նըրա հետ կիսեց:
Երբ որ ձիւնը հալւեց,
Բըսաւ կանաչ խոտ,
Պառաւն իր այծիկը
Դուրս տարաւ արօտ.

Ուրախ, զըւարթ,
Դուրս տարաւ արօտ:

Թանձր մառախուղը
Գետինը պատեց,
Պառաւի առջեկից
Այծը կորցրեց:

Ափանս, ափանս,
Այծը կորցրեց:

Պառաւը լաց էլաւ,
Իսկ գայլը օռնաց,
Մոլորած այծիկը
Բարձր մըկըկաց.

Մըկըկ, մըկըկ,
Այծը մըկըկաց:
Գայլն իսկոյն մօտեցաւ,
Այծին շալակեց.
Պառաւը հետեկից
Բարձրաձայն գոչեց.
«Հայ-հայ, վայ-վայ»,
Բարձրաձայն գոչեց:
Խեղճը մնաց կանգնած,
Մի փունջ խոտ ձեռին,
Անմխիթար ձայնով
Կանչելով այծին.
«Եկ-եկ, եկ-եկ»,
Կանչելով այծին.



ԾԱՌԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեր տըւած վայտից
Կրակ են անում, տուն
տաքացնում, թոնիրը վա-
ռում, կերակուր եփում,
վափուկ հաց թխում, ու-
տում, կշտանում, բայց
մեզ չեն յիշում, մեզ չեն
պահպանում, այլ անգութ
կերպով մեզ կոտորում
են, մեզ փչացնում, ոչըն-
չացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարաքներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակներից յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, աեղան, նստարան դուռ ու պատուհան, և այլ շատ տեսակ կաճ ու կարասիք: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ գետերով անցնում, սայլեր են շինում, ամեն ինչ կրում. գութան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում՝ նաւեր են շինում՝ ծովի մէջ լողում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր. նուռ ու սերկեիլ, կեռաս ու սպոր. գեղձ կարմրաթուշիկ, ծիրան տնուշիկ: Հապա խաղողը... և քանի տեսակ. կանաչ ու կարմիր, թուլութուխ ու սիալ-

տակ, և այդ ամենը մարդիկն են ուտում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ խնայեցէք, մեզ պահպանեցէք և ձեր հանդերում, ձեր պարտէզներում ծառեր տրնկեցէք:

Ծիծեռնակ

Խեղձ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգըստանում, այլ միշտ թըռչելով, դէս դէն ընկնելով՝ նիւթ է հաւաքում:

Նիւթ է հաւաքում, խոտ ու կաւ կրում, իր բունը շինում, բմբուկով լցնում, բաւ փափկացնում ու մէջը մտնում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում և երեք շաբաթ վրան թուխս նստում. ձագուկներ հանում:

Փափլիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը թըռչում է, դէս ու դէն ընկնում, մժեղներ բերում, նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն ձագերը թևաւորում են, բնից դուրս թռչում և իրանց մօր հետ ճանապարհ

ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գնում:

Զմեռն անցնում է, գարունը մտնում, մեր ծիծեռնակը էլի գալիս է, իր բունը գտնում, ճչում, ծլլւրլում, քանդւածը շըռկում, կարկատում, շի-

նում, նոր ձւեր ածում, նոր ձագեր հանում, պահում մեծացնում, աշնան ժամանակ, առաջալայ նման, ճանապարհ ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գընում:



Մեղուն ու մարդը

Մեղուն մէկ անգամ հարցը իր տիրոջը.

—Քո կենդանիներից որըն է ամենից օգտակարը:

—Գիտեմ, գուերեկի կարծում ես, թէ ամենից օգտակարը դու ես, բայց սխալում ես, պատասխանեց տէրը:

—Ի՞նչպէս, տէր, որն է այն կենդանին, որ ինձտնից աւելի օգտակար է:

—Բչխարը:

—Այդ հաշիւ չէ, տէր. ոչխարը իմ հասակակից չէ: Նա մի ահապին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

—Շատ բարի. շերամը քեզ պէս փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

—Շերամը որն է:

—Շերամն այն խմաստուն որդն է, որ մեզ համար աննման քնքոյշ մետաքս է շինում:

—Հա, իմացայ. այդ այն շատակեր ճիճուն չէ, որին անդադար կերակրում էք թրթան տերեներով:

—Նա ինքն է:

—Բայց գիտես, տէր, նրա չափ որ մեզ էլ կերակրէք, մենք մեղրի տեղ ուկի կը ինենք ձեզ համար: Դուք ոչ մի կենդանի չունիք, որ իր կերակրուը մեզ նման ինքը լինի շի-

Նելիս և որիշներին էլ բաւ
ժին լինի տալիս: Այնպէս
չէ, պարոնս:

— Այդ, այդ կողմանէ
դու ուղիղ ես. մենք դէպի
ձեզ շատ ապերախտ ենք,

որովհետև բոլորովին ամս
խնամ ենք թողնում ձեզ...

— Մեղուն ուրախացաւ
տիրոջ պատախանիցը և
թռաւ նստեց վարդենու
վրայ:

ՄԵՂՈՒ

Հա ծագեցաւ արեգակը,

Հա ծաղկեցաւ մանուշակը.

Մեղուն թողեց իր փեթակը

Տըգտըգալով, տըգտըգալով:

Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,

Մեղը առաւ քաղցր անուշիկ՝

Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,

Պըգպըգալով, պըգպըգալով:

Անուշ մեղը մանր տըղոց,

Դեղին մոմը ամեն սրբոց,

Իսկ չարերին կըճ ու խայթոց,

Կըսկըծալով, կըսկըծալով:

ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՎԵճը

Եզը, կովը և շունը վի-
ճում էին միմեանց հետ և ա-
մեն մինը պնդում էր, թէ մեր
տէրը ամենից շատ ինձ է
սիրում:

— Ի հարկէ, նա ինձ ա-
մենքիցդ շատ է սիրում, ա-
սում է Եզը, և գիտէք ինչու
համար: Նրա համար, որ ես
եմ նրա արօրն ու տափանը
քաշում, ես եմ նրա համար
անտառից փայտաւմ:

Ինձ է լծում սայլում և իր ցո-
րենը տանում ջաղաց, այնտեղ
ալիւր շինում. յետոյ էլի ես
եմ տանում քաղաք, ուր նա
ծախում է այդ ալիւրը և իր
տան համար առուտուր ա-
նում, երեխանց համար հագ-
նելիք առնում: Ուրեմն, դուք
ինչ էք կարծում, ես որ չը-
լինէի, նա ինչպէս կարող էր
ապրել:

— Այդ ճշմարիտ ես ա-
սում, ասեց կովը: Բայց մեր
տէրն ինձ ամենքիցդ աւելի

որ սիրում է, այդ նրա հա-
մար է, որ նա իմանում է,
թէ քեզ նման աշխատասէր
ու ժրաջան եղնուկին ես եմ
պահել մեծացրել:

Այս մէկը Մէկ էլ որ՝ նը-
րա գերդաստանը իմ կաթ-
նովս եմ պահում: Այն մա-
ծունն ու կարաղը, այն սերն
ու կաթը, այն եղն ու պանի-
րը, այն տաքստաք թանէ սպա-
սը, որ ամեն օր խըղտում
են, ում տըւածն է: Տեսնում
էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ,
բոլոր քաղցած կըկուրուին:

— Դու էլ ես ճշմարիտ
ասում, սիրուն կովիկ, սկսեց
Շունը: Ո՞վ կարող է ուրա-
նալ քո լաւութիւնը: Շատ
անգամ ես ինքս էլ եմ մաս-
նակից լինում քո տըւած ա-
նուշ թանին: Մեր տանտիկի-
նը ամեն ինոցի հարելիս թա-
նիցն ինձ բաժին է տալիս:
Ով որ քո լաւութիւնն ուրա-
նայ, երկու աչքով կուրանայ:

Ես շատ երախտագէտ եմ, ոչ
ոքի լաւութիւնը չեմ կարող
ուրանալ: Բայց գիտէք ինչ
կայ: Դուք մի նեղանաք, որ
մեր տէրն ինձ ամենքիցդ էլ
շատ է սիրում. դրա համար
մեծ պատճառ կայ և ահա ա-
սեմ, թէ ի՞նչ է դրա պատ-
ճառը...

Եւ շունն սկսեց մէկ-մէկ
հաշւել, թէ ինքն ինչ ու ինչ
է անում:

Ասած է շունը ող հա-
ջել սկսի, էլ չի դադարիլ:
Այնքան հաշեց եղան ու կո-
վի հետ, որ տէրն իմացաւ,
գնաց նրանց մօտ, շան լեզ-
վիցն աղատեց, ասելով. «Թող-
տուր դրանց, Բողար, դու չը-
գիտե՞ս, որ ամենք էլ ինձ
հարկաւոր էք, ոչ մէկդ միւսի
արածը չէք կարող անել. այդ
պատճառով ես ձեզ ամենքիդ
էլ սիրում եմ, դուք էլ սիրե-
ցէք միմեանց»:

ՄԵՂՈՒՆ ՈՒ Աղաւնին

1. Փորձանք

Ժրաջան Մեղուն ծաղկա-
լից դաշտում իր մեղը հա-
մար նիւթ էր հաւաքում:
Արկի տակին շատ աշխատե-
լով, Մեղուն շատ յոգնեց և
խստ ծարաւեց:

Նրանից մօտիկ մի փոքրիկ
լիճ կար. մօտեցաւ լճին,
վեր եկաւ ափին, որ քիչ ջուր
խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ
ստանայ, թոշի տուն գնայ:
Հէնց որ կոացաւ, որ ջուր
կում անի, յանկարծ գլորեց,
ընկաւ ջրի մէջ: Նա շատ աշ-
խաւեց, որ ցամաք դուրս
գայ, բայց մի փոքր ալիք նը-
րան ներս քաշեց, ափից հե-
ռացրեց:

Այսպէս իեղած Մեղուն ցամաքից զրկւեց, ջրի երեսին թևերը փռեց և յայսը կարածն մնաց մեկնըլած:

2. Օգնութիւն ուրախ օգնութեամն հասմաւ միշտ բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր խեղճուկ Մեղին՝ յուսահատ փռւած ջրի երեսին: Իսկոյն շտապեց, մի տերև կտցեց և տարաւ Մեղի առաջը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեկի վրայ, խելքը ժողովեց, գէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի Աղաւնուն: Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն գովել, շնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղը միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ թուաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

3. Երախտագիտութիւն

Մի օր մեր Մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից սիւթ էր ժողովում և ազտղովով Աղաւնուն դո-

վում: Մեղը հանդէպ, մի ծառի վրայ նստած նոջում էր ծանօթ Աղաւնին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրաժանը ձեռին, մէջքը կռացրած, չար օձինման սողում է սուսափում գէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ, որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին՝ իր բարերարին: Եւ ճշմարիտ սր այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց: Հէնց մատը դըրաւ կայծառի ոտքին և ուզեց քաշել, գործը վերջացնել, այդ իսկ ըստէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքն այս այլ իսկ ըստէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքըն այսպէս խայթեց, որ նա վեր ցատկեց: Նրա հրացանը նշանից շեղւեց և իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց ու տեղից թըռչըցեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերանաս մահից փրկեց, ազատեց:

ինչ որ ցանես, այն կը հանձեստ Արած լաւութիւնը չի կորչիլ:

Փոքրիկ գառը

Մի փոքրիկ գառ, ծիւնի նման մաքուր, սպիտակ:

Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի:

Դաշտ որ հասաւ, սկսեց թռչել քարերի տակ, իւղ սփոյլ էլ չէր ուղում փոքր միջոց հանդիսաւ նստի:

Այս ու այն կողմ վագւրզելով չափ էր ընկնում, թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:

— Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը.

Զգնյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:

Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում, իր խաղան ու վագւրզելն է շարունակում:

Եւ վերջապէս՝ երբ մօր խօսքին ականջ չարաւ, Սարի գլխին իր գժութեան պատիժն առաւ.

Մի մէծ քար կար այստեղ ընկած, նրա ծայրում Մեր գառնուկը թռչկոտելով խաղ էր անում,

Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորւեց,

Ոտի մէկը տակովն էրաւ, կոտրւեց:

Մեղուն ու հաւը

Հաւը Մեղի վրայ ծիծաւ կելով ասեց մէկ անգամ:

— Ի՞նչ անշնորհք ճանա ես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս:

— Իսկ դու, Հաւիկ, մարիկ, ի՞նչ ես շինում, հարցըցեց Մեղուն:

— Միթէ չըգիտես, թէ ի՞նչ եմ շինում ես. քեզ նման պարապ-սարապ չեմ տըգտըզում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձու, գիտես մէկ ձուն քանին է:

— Գիտեմ, գիտեմ, հաս-

կացայ: Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թէ դու օրը հարիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածել, անխելք Մեղու:

— Ապա եթէ քո ածածըդ ընդամենը մի ձու է, ել ի՞նչո՞ւ ես հարիւր անգամ կըրկչում, թէ հայ, հարայ, լսեցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով այսքան կըրկչալուն մի ձուն շատ քիչ է: Այսպէս չէ, իմաստուն Հաւիկ մարիկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում, դու որ իմ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ,
քեզ պէս կըրկչալով չեմ
յայտնում ուրիշներին: Ես
գլուխս քաշ գցած, մեղր եմ
շինում: Գիտե՞ս ինչ է մեղրը:
Դա հաւի կերակուր չէ, քո
խելքի բանը չէ, հաւիկ
մարիկ:

Բառախաղ

Պօղոսն ու Պետրոսը բա-
ռախաղի էին տալիս: Պօղոսը
վարժւած էր, իսկ Պետրոսը
նոր էր սովորում:

Ահա թէ ինչպէս էին խա-
դում:

Պօղոս. Պետրոս, ասա, տունը:

Պետրոս. Տունը:

Պօղոս. Քեզ կծի շունը:

Պօղոս. Ասա դուրը:

Պետրոս. Դուրը:

Պօղոս. Ընկնիս ջուրը:

Պօղոս. Ասա պաս:

Պետրոս. Պաս:

Պօղոս. Ուտես թանէ սպաս:

Պետրոս. Էլ չեմ ասում. Իի-
մա ես կհարցնեմ քեզ:

Պօղոս. Լաւ, հարցրու:

Պետրոս. Ասա ծիտ:

Պօղոս. Ծիտ:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դաշտը սիրուն է դալար բոյսերով

Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:

Ուսումնարանը նոյնքան սիրուն է

Իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:

Պետրոս. ուտես մախոխ:
Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս:
Ես ասում եմ ծիտ, դու
ասում ես մախոխ. այդ
ինչպէս կարելի է. տես-
նում ես՝ նման չեն. Դեռ
սպասիր, էլի ես կըհար-
ցնեմ—
Ասա՝ ծիտ է:

Պետրոս. Ծիտ է:
Պօղոս. Պետրոսն անմիտ է:
Պետրոս. Է՞ն, էլ չեմ ասիր,
ես անմիտ չեմ.
Պօղոս. Լաւ, շարունակենք,
էլ այդպէս չեմ ասիլ:
Ասա հաւ է:

Պետրոս. Հաւ է:
Պօղոս. Պետրոսը լաւ է:
Պօղոս. Ասա սանձ.

Պետրոս. Սանձ:
Պօղոս. Պետրոսն ուտի տանձ:
Պետրոս. Հիմա ես կըհարցը-
նեմ: Ասա—սամի:

Պօղոս. Սամի:
Պետրոս. Շաքարը ծամի:

Պետրոս. Ասա հաց:
Պօղոս. Հաց.

Պետրոս. Մի քիչ կաց:
Պօղոս. Է՞ն, բաւական է, դու
լաւերը չես իմանում:

Սիրուն է ծառը կանաչ ճղներով, այ վերյա Ս
Փունջ-փունջ կախոտւած իր պտուղներով.
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր առաքինի խելօք սաներով:
Աստւած, պահպանիր դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով
Եւ մենք նըրանում զուքլինք, զարդարւինք
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

Ուկի և երկաթ

Ուկին երկաթին անար-
գելով, ասեց մէկ անգամ.
—Երանի գլանենամ, դու ին-
չացնւ ես, որ մետաղների
կարգն ես ընկել. քո ու ու
ժանդու երեսովը մարդու
վրայ զգւանք ես բերում:
Նայիր ինձ վրայ. տես՝ ինչ-
պէս գեղեցիկ եմ փայլում,
ինչպէս շողշողում: Նայիր
մեր սիրուն օրիորդների ու
հարսների ականջներին ու
մատներին, դու կըտեսնես
իմ փառքն ու պատիւը. Նա-
յիր նրանց ճակտոնների շար-
քերին, դու կըտեսնես իմ
փայլն ու գեղեցկութիւնը:
Զեմ հաշւում գինուքը, զըն-
դասեղները. գիտեմ որ դու
այնքան կոշտ ու կոպիտ ես,
որ այդպէս ընքուշ բաների
մասին ոչ ճաշակ ունիս, ոչ
հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց
Ուկուն.
—Ես չեմ ուրանում, Ու-

կի աղա, որ դու գեղեցիկ ես,
ամեն բանի զարդն ու զար-
դարանքը դու ես, գինըդ-
շատ բարձր է, աղքատի բան
չես, բայց ինչո՞ւ ես չափեցո-
ղուրս գոռողանում: Քո սի-
րուն օղակներդ ոչ ականջի-
լակիքն են աւելացնում, ոչ
մատներին ու կոներին զօ-
րութիւն ու ժրութիւն են
տալիս, ոչ կուրծքերի նուրբ-
մանեակները սրտին զութ ու
խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդ-
ներին, որ քեզ այդ չափ պա-
տիւ են տալիս, քեզ համար-
հալւում, մաշւում ու բարա-
կացաւ ընկնում: Իմ մի փոք-
րիկ առեղը քո բոլոր զար-
դարանքներից աւելի է օգուտ
տալիս: Գիտե՞ս, Ուկի աղա,
իմ փոքրիկ ասեղը քանի տուն-
է պահում, քանի որբի կերա-
կրում: Իմ խոփին ու ձեփչը
ամբողջ աշխարհին հաց են
տալիս:

Մարդիկ ինչ որ շինուած են, կտրիչնու խարասցը, էլ կարմղ
կամ պէտք է կտրեն, կամ էին մարդիկ քար քարի վրայ
պէտք է ծեծեն, կամ պէտք է զնել, փայտ փայտի փայտ
խարասցեն, կամ պէտք է կար- Ահա այդպէս պարծեն-
կատեն: Իմ ուրագն ու կացինը կոտ ես դու, Ուկի աղա, քո
որ չըլինին, իմ դուրն ու շա- փայլից կուրացած՝ ուրիշ
դափը, իմ սղոցն ու մուրճը, իմ լաւութիւնը չես տեսնում:
գալիքարդար գալիքար նունայդ գալիք ու
փողմանի մորմոր մանաւ լիբերդի

Երգ պանդստի

Կամ իշխարդ առ զու արա վի
-կար ու մրգար Ծիծեռնակ, ծիծեռնակ,
բղմիր ամ Թու գարնան սիրուն թուչնակ,
մաղ ժաման Դէպի ու ինձ ժաման ժաման
Դէպի ու ինձ ասա, անմանք ժաման
թուչում ես այդպէս արագ:
Ախ, թուիր, ծիծեռնակ,
Ծնած տեղ՝ Աշտարակ,
Անդ շինիր քո բունը—
Հայրենի կտուրի տակ:
Անդ հեռու ալկոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Ապասում է օրէցօր:
Երբ տեսնես դու նըրան,
Խնձնից շատ բարև արա,
Ասա թող նստի լայ
Իր անբախտ որդու վրայ:
Թու պատմիր, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշւել եղել կէս:
Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս:
Շուտով սառ հողի տակ
Կըպառկեմ այստեղ մենակ,

Թողնելով հօրս սրտում
Ցաւակի յիշատակ:
Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, զնա արագ
Դէպի Հայոց աշխարհը,
Ծնած տեղս Աշտարակ:

մին բայ մին մաս մաս մաս մաս

Արշակի շարադրութիւնը
Երկար ժամանակ սպա-
սում էի, թէ երբ պէտք է ինձ
ուսումնարան տանեն: Ու-
սումնարանի մօտովն անցնե-
մի՝ որ լսում էի աշակերտ-
ների երգելու ձայնը, սիրտս
մի ուրիշ կերպ էր դառնում,
մտքումս ասում էի, ախ, Երբ
կըլինի, որ ես էլ սրանց մէջը
լինեմ, սրանց պէս կարդամ,
սրանց պէս երգեմ, սրանց
հետ խաղամ. արգեօք կար-
ժանանամ այդ օրին:

Վերջապէս փափագիս հա-
սայ. հայրիկս մի առաւօտ
յայնեց, թէ երկուշաբթի օրը
քեզ տանելու եմ ուսումնա-
րան և այսօր պէտք է զնամ քո
ուսման պիտոյքներն առնեմ:
Այն օրը էլ ես հաց չըկերայ
չափազանց ուրախութիւնից:

Երեկոյին հայրս եկաւ
տուն: Ի՞նչ ասես որ չէր ա-
ռել ինձ համար. —թուղթ, թա-
նաք, թանաքաման, դասա-
գիրք, տեսակ-տեսակ դըշա-

կոթեր, մատիտներ, տետ-
րակներ: Բոլորը ջոկ-ջոկ թըղ-
թերում փաթաթեցի ու դրի
պահարանումս, մինչեւ հասաւ
երկուշաբթին՝ ուսումնարան
գնալուս օրը:

Նոր տարի

Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի,
Մանր տըղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր տղայք են ուրախ,
Ունին կաղին գօղինադ,
Մալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, ունար և ընկուզ:

Մանր տղայք, չըմոռնաք,
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօդնական:

Նոքա հայր ու մայր չունեն
Աև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կասէ ձեզ Աստւած:

ԱՌԱԽՈՏԻԱՅ ԱՂՋԹՔ

Ով Տէր մեր գթոտ, Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ Քո լոյսդ անաղօտ:
Թող լուսաւորւին մեր միտքն ու հոգին,
Որ Քո լոյս անւան լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն:

Տէրուինսկան ԱՂՋԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես, սուբ եղիցի անուն Քո,
Եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս
յերկինս և յերկրի: Զհաց մեզ հանապազորդ տուր մեզ
այսօր. թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք
մերոց ալարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձու-
թիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի Քո է արքայութիւն
և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՋԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի,
Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր,
Իսկ ես ինչ ունիմ որ ինչ տամ Քեզի.
Առջևտ կընկնիմ, կենամ աղօթքի—
«Ճնորհ տուր ինձ, որ ծնողներիս,
Վարժապետներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ Փեզ՝ հաճելի»:



ԹՈՅԱՏՐԻԱԾ ԵՆ ՊԱՏՇԱՃԱԽՈՐ ԻՇԽԱՆԱՒԹԻՒՆԻՑ

«Արեիկ»	20 կ.
Ուսումն Մայրենի Լեզւի. ա. տարի «Պատկերա- ւոր այբբենարանով»	20 »
Ուսումն Մայրենի Լեզւի. բ. տարի	40 »
Ուսումն Մայրենի Լեզւի. երրորդ գիրք	70 »
Ուսումն Մայրենի Լեզւի. չորրորդ գիրք	90 »



ԳԼԽԱԽՈՐ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ԳՏՆԻՈՒՄ ԵՆ

ԹԻՖԼԻՍ - «Գուտտենբերգ» և «Գիր» գրավա-
ճառանոցներում,



7764